«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, 2019թ.

Չորրորդ դասարանցիների տարեվերջյան ստուգատեսը մայրենիից

Նախագիծ

Իրավական հիմքերը

1. Հանրակրթության պետական չափորոշչով՝ տարրական կրթության ծրագրի «Հայոց լեզու» ուսումնական բնագավառի նպատակաուղղվածությունը.

   մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալու, հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու նախնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

2. Կրթահամալիրում գործող մայրենի լեզվի ծրագրով որոշված խնդիրները.
   - գրավոր ու բանավոր ճիշտ խոսքի և հստակ արտահայտման անհրաժեշտ հմտությունների մշակում.
   - սովորողի խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զորացում. մեդիահմտությունների անընդհատ զարգացման միջոցով խոսքի, ստեղծագործական մտահղացումների հրապարակայնացում, հանրայնացում (բլոգի, կայքի, սոցցանցի և վիրտուալ այլ միջոցներով).
   - վերլուծական ու նկարագրական հմտությունների, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացում.
   - լեզվաբանական գիտելիքների յուրացման և լեզվական նյութի միջոցով՝ սովորողների ընդհանուր կրթական հայացքների շրջանակի ընդարձակում.
   - համացանցային տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն, բառարաններից և տեղեկատու աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում:

Բովանդակությունը

Ստուգատեսն ուղղված կլինի սովորողի հետևյալ կարողությունների և հմտությունների ներկայացմանը.

- բանավոր խոսքի արտահայտման անհրաժեշտ հմտություններ
- գրավոր խոսքի արտահայտման անհրաժեշտ հմտություններ
- ՏՀՏ միջոցների և համացանցի գործածման հմտություններ
- բլոգավարական հմտություններ

Կազմակերպումը.

1. Սովորողը ստուգատեսի գալիս է իր համակարգչով: Ստուգատեսն ընթանում է ճամբարային աշխատակարգով՝ իր մեջ ներառելով հետևյալ փուլերը.

- *բանավոր խոսք, բլոգավարության ներկայացում*
  Պրոյեկտոր ունեցող սրահում սովորողը ներկայացնում է իր բլոգը, պատմում իր բլոգի, բլոգով աշխատելու իր փորձի մասին: Սովորողը ներկայացնում է իր կարծիքով իր ամենահաջողված նախագիծը:
- *գրավոր խոսք, ընթերցած նյութի ընկալում (*google-ի ձևաթղթով աշխատանք)
  Ձևաթղթի բովանդակությունը.
  Անուն-ազգանուն, դասարան
  Բլոգի հասցե (հղում)
  Առակի ընթերցում և հարցերին պատասխանել
  Մտքերը գրավոր շարադրել՝ ընտրելով տրված վերնագրերից մեկը (նկարագրական և երևակայության գործածմանն ուղղված վերնագրեր).
- *օրվա լուսաբանում՝*
  պատում
  տեսապատում
  հարցազրույց
  Սովորողը նյութը հրապարակում է իր բլոգում մինչև ուսումնական օրվա վերջը:
2. Սովորողն իր բլոգում բացում է մայրենիի ստուգատեսի էջ, որտեղ տեղադրվում են այդ օրը արված աշխատանքները:

Կազմակեպմանն ուղղված պահանջներ
Սովորողների բլոգների ներկայացումը տեսագրվում է: Տեսանյութը հրապարակվում է youtube-ում, ենթակայքում, հետո նաև սովորողների բլոգներում՝ ստուգատեսի էջում:
Սովորողի բլոգի ստուգատեսի էջում հրապարակվում են նաև՝ google-ի ձևաթղթով աշխատանքը, օրվա իր լուսաբանումը՝ պատումը, տեսանյութը, ձայնագրությունը: